միակ գեղեցիկ պատկերազարդ հրատարակութիւնից, որ գոնէ ժամանակի ընթացքում մի շարք գրքերով բաւականութիւն է տուել ժողովրդի գեղարուեստական ճաշակին։

Հանգուցեալը հազիւ միջնակարգ կրթութիւն ունէր. բայց իւր անխոնջ աշխատասիրութեան շնորհիւ կարողացաւ ստեղծել մի զուտ գեղարուեստական հանդէս, որ շարունակեց մինչև իւր մահը, թէպէտ շատ անկանոն կերպով, այնպէս որ տարեկան երկու գրքի փոխարէն հազիւ մէկն էր լոյս հանում։

Ցանկալի է, որ նորա հրատարակութիւնը անցնէր մի հմուտ անձնաւորութեան ձեռքը։

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

— Մեր աշխատակից պ. Ե. Շահազիզը Նախիջևանից գրում է մեզ.—«Շտապում եմ աւետել ձեզ շատ ախորժելի լուր. Նալբանդեանցի գրուածներից մէկը, որ մինչև ցայսօր կորած էր համարւում, գտնուած է, և դորա մի օրինակը այժմ գտնւում է մեր ձեռքին։ Այդ «Ղազմիր»ն է գրաբառ բանաստեղծութիւններից և մի մեծ քերթուածից—«Արկածք նախահօրն։ Սոքա բոլորը ևս գրուած են ընտիր գրաբառով և բանաստեղծութեան ճշմարիտ հոգւով և քանքարով։ Մարդ չէ կշտանում կարդալով, այնքան գեղեցիկ է, նուրբ և թարմ. կարծես «Դրախտ կորուսեալ» քերթուածի մի հրաշալի կտորը լինի։ Կարծում եմ, որ դա մի մեծ գիւտ է մեր գրականութեան համար, և եթէ ինչպէս հարկն է հրատարակուէր, մեծ «ֆուրոր» կանէր։» Կսպասենք որ պ. Շահազիզը իրեն յատուկ եռանդով շուտով հասարակաց սեղանի վերայ դնէ այդ թանկագին աւանդը։

— Գեր. Մակար եպիսկոպոս Բարխուտարեանցը

պատրաստել է մի կարևոր աշխատութիւն — Ղուա-նիայ պատմութիւն սկզբից մինչև մեր դարը, այդ երկը որքան մեզ յայտնի է, մօտ է իւր վախճանին և այժմս ս. հեղինակը պատրաստում է Աղուանից աշխարհի ընդարձակ և մանրամասն քարտէսը։

— Հանդիսիս աշխատակից պ. Ն. Քարամեանը երկասիրելով Վինագրադովի յայտնի եռահատոր Ընդ-հանուր պատմութեան հայ թարգմանութիւնը՝ յանձնել է ս. Էջմիածնի տպարանին։ Մեզ հաղորդում են, որ տպարանը ձեռնարկելու է նորա տպագրութեան ներ-նայ յունուար ամսից։

— Անցեալ 1899 թուին լոյս տեսաւ մեր հրա-տարակութեամբ «Ղիւան Հայոց պատմութեան» ժողո-վածուի Դ. գիրքը։ Այդ հատորը նուիրուած է բաց-առապէս Ղուկաս կաթուղիկոսի ժամանակին՝ 1780—1800 թ. գրքին կցուած է Ղ. կաթողիկոսի ինքնագիր կոնդակի մի վիմատիպ պատճէն և հայրապետիս լու-սանկարը.—Ներկայումս Հրատարակիչը պատրաստել է Դիւանի Ե. գիրքը, որ կպարունակէ Դաւիթ կաթուղի-կոսի գրագրութիւնները։

— Առ այժմ որպէս լուր կարող ենք հաղորդել, որ դիտաւորութիւն կայ առաջիկայ տարուանից հրատարա-կել Պ. Բուրգում մի նոր, զուտ գեղարուեստական հանդէս «Ղիսուրեան» անունով։

ՔԻՉ Մ'ԱԼ ԱՆՈՒՇԵՂԷՆ։

Նոր տարի և ծնունդ կը մօտենան։

Ամեն մարդ կը պատրաստուի անուշ ուտելու։

Ամեն տուն առաւել կամ նուազ իրարանցում կայ անուշի համար։